հայ եկաւ նրան գանգատուելու մի մահմեդականի դէմ, որ խլել էր իւր կինը և դրել հասարակաց տանը, որ իւր համար փող վաստակէ, շահը բերել տուեց այդ մահմեդականին իւր առաջ և մի լաւ պատժելուց յետոյ ստիպեց կնոջը դարձնելու իւր ամուսնուն, և հրատարակեց մի հրովարտակ, որի զօրութեամբ ոչ մի հայ և ոչ մի հայուհի չէր կարող ստրուկ լինել իւր տէրութեան մէջ. այս մի մեծ բարիք եղաւ խեղճերի համար, թէպէտ և շատ ուշ էր, որովհետև արդէն իսկ մի քանի հազարներ ցրուած էին ամբողջ թագաւորութեան մէջ, և այն շատ հեռաւոր տեղերում, որոնցից ամենեւին յոյս չկար, մասնաւորապէս աղջկունք։ փոքրիկ երեխայք, որոնք չունին ոչ մի տեղեկութիւն այս հրովարտակի մասին և ազատ չեն դատաստան խնդրելու. բայց նրանք, որոնք մերձաւոր էին շահի պալատին, օգտուեցան այս հրովարտակից և ազատ թողնուեցան, իսկ միւսները ազատուում են օրէցօր։

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ ԾԽԵԼՈՒ ԴԷՄ

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Յակոբ Արքեպիսկոպոս և շնորհիւ սրբոյ Հոգւոյն վերատեսուչ և պատրիարք մեծի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ, յորմէ սիրով և Աստուածային օրհնութեամբ յայտարարութիւն եղիցի բոլոր հոգևորական դասուց կարգաւորացդ՝ վարդապետաց և քահանայից. զի թէպէտ ի վաղուց կրկին և կրկին առ հասարակ պատուիրեալ եմք ձեզ ամենեցուն չուպուխս՝ նարկիլէ՝ և սիկարա չքարշել ամենևին ոչ յայտնի և ոչ գաղտնի. զի մեր ազգի կարգաւորաց ի բնէ անտի արգիլեալ է ի սրբազան նախնեաց մերոց բարեյօժար սովորութեամբ. որ արդարև անվայելուչ է ամենայն կերպիւ. նոյնպէս ի գինետուն և ի խոլթուխ մէխանայ չմտանել՝ և չնստիլ, և կամ ոտքի վրայ չխմել. ահաւասիկ այսու խրատական կոնդակաւս խըստիւ պատուիրեմք եկեղեցականաց բնաւ յաւիտեան գործ չածել չուպուխ՝ նարկիլէ՝ սիկարա, և ոչ ի գինետունս և

ի խոլթուխս երթալ և նստիլ։ Աւագերիցունք և Աթոռակալք և ծերունի քահանայք բաց ի բազմադիմի ուղղութեանց հետևելոյն զկնի, ամենայն արթնութեամբ պարտին հոգ տանիլ և զգուշանալ շրջահայեցութեամբ, և նկատել զօրհնապազ՝ և լրտեսել ի վերայ քահանայից ի բաց թողուլ անպատճառ զմոլութիւնս զայսոսիկ, այսինքն ի մէ խանայ երթալն՝ և չուպուխ նարկիլէ քարշելն։ Ապա պարտ է քահանայից ժողով առնել մինն անգամ ի դուրս չմնալով՝ ամենեցուն ի միտս և ի յուշս տպաւորել զայս յատկակի բարի խրատս՝ որ ի վերայ կարգաւորաց զի այսուհետև մի ոք տեսցէ ի ժողովրդոց կարգաւորի մոյ չուպուխ՝ նարկիլէ՝ սիկարա քարշելն, և ի գինետունս կամ ի խոլթուխս մտանելն՝ ուր նստեալ և կամ յոտին կացեալ ըմպել և արբենալ ի գայթակղութիւն ժողովրդոց և ամենայն տեսանողաց. և եթէ կայցէ այնպիսի քահանայ ի միջի ձերում, խստիւ յորդորեցէք զնա, և պատուիրեցէք անգամ մի ևս գործ չածել, և եթէ կրկնեսցէ՝ ի ժողովի ձերում պատժեցէք զնա առանց աչառութեան. քանզի յետ այսորիկ մեք ևս անշան անձանց ձեռամբ լրտեսել տալոց եմք, եթէ ի վերա· կարգաւորի մոյ տեսանիցին անպատեհութիւնքս այսոքիկ, այսինքն չուպուխ խմել՝ և ի գինետունս երթևեկելն, Աստուած մի՛ արասցէ. յոր կողմէ և որ եկեղեցւոյ քահանայի պատահիցի, ոչ միայն յանցաւոր քահանայն ունի պատժիլ, այլև Աւագերէցն և Աթոռակալն նոցին և Ծերունիք ոմանք ևս ի միասին անխնայ պատժեմք վասն անհոգութեան իւրեանց. ուստի զգուշացէք սիրելիք, և միմեանց յայսմ մասին դատախազ կացէք, մոռացէք և մոռացուցէք զայս չար սովորութիւնս. ապա թէ ոչ՝ յատենի սրբոց Եկեղեցեաց ծանուցանելով խայտառակեմք և անխնայ դատապարտեմք զայնպիսի օրինազանց նախնեաց սրբոց Հարց մերոց կանոնաց անհնազանդաբար խանգարիչսն։ Այս ևս յայտնի լիցի ձեզ, զի ոչ միայն արգիլեալ ի մտանելն ի գինետունս և ի խոլթուխս, այլ և յերեկոյս ի սեպհական տունս և կամ ի հարսանիս և ի կիրակնամուտս ննջեցելոց ամենևին մի՛ երևեսցի ի վերայ քահանայից արբեցութիւն՝ որ է մայր ամենայն մեղաց. որով օրինակ չարեաց լինին յաչս ժողովրդեան, և իբրև անզգայ անկեալ մնան,

մինչև անգամ եթէ յանկարծ ի գիշերի կոչիցին ուրեք՝ թէ թէ առ հիւանդս և թէ յայլ ինչ գործ կարևոր՝ ինքեանք կարօտին այլոց, և լինին խայտառակ առաջի տեսողաց, և ընդ առաւօտս ևս տկարանան կանխել ի սուրբ Եկեղեցի, և վերջապէս պատճառ լինին կարճութեան կենաց իւրեանց, և դատապարտին վասն արբեցութեան իւրեանց և վասն անձնասպանութեան, զի արբեցողք զարբայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն, որ է վճիռ առաքելական։

Ապաքէն լսեցինք չլսեցինք մի ասէք, զայս գիրս յետ ընթեռնլոյ անկորուստ պարտիք պահել ի ժամարարի սենեկին սրբոյ Եկեղեցւոյ՝ ակներև ամենեցուն կախելով, զի հանապազօր ընթերցեալ քահանայից զգուշասցին. քանզի Հոգևոր Ծողովով մերով վճռահատեալ եմք, այսուհետև չուպուխ՝ նարկիլէ՝ սիկառա խմող կարգաւորն՝ և կամ ի գինետուն մտանող քահանայն ընդունելու չեմք իբրև զկարգաւոր, այլ լոկ աշխարհական ճանաչելով զայնպիսին արտաքս հանելոց եմք ի կարգէ քահանայութեան. զայս հաստատուն մշանջենապէս պահելի կանոնադրութիւնսն ի յուշ բոլոր կարգաւորաց տպաւորեցէք. իսկ եթէ ոք ընդհակառակն գործիցէ յայսմհետէ, անշուշտ և անխափան ելանելոց է ի կարգէ քահանայութեան, լոկ աշխարհական համարեալ ճանաչի այնպիսի հայրենի ցանկն քակող՝ և բնութեան իւրոյ ծառայող կարգաւորն։

Ուրեմն ո՛ սիրելիք մեր, լաւ ի միտ առէք զգրեալս, եթէ ոք ի կարգաւորացդ յետ այսորիկ յամառեալ մնասցէ ի չարիս իւր, և չկամիցի թողուլ յանձնէ զայս անվայել սովորութիւնսն, ի բաց կացցէ ի քահանայական կարգէ, զի մի յետոյ ի յայտնիլն խայտառակեսցի, զի չիք ինչ ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի. յայնժամ կրկնակի յանցաւոր դատի, և յատենի ծանուցմամբ, և խայտառակութեամբ ելանէ իբրև զծանր յանցաւոր և հակառակող բարեկարգութեանց. այլ կարէ այժմէն կամ կամաւ իւրով ձգել ի բաց զայս աշխարհային սովորութիւնսն իւր և կամ զկարգն քահանայական. և եթէ յանդգնաբար և անհնազանդութեամբ զերկոսեանն ի միասին գործածող վերերևեսցի յայսմհետէ, հարկիւ և անպատճառ ունի զանազան պատիժս դատապարտութեան և անարգութեան կրել անխնայ. ահա պարզա-

պէս առաջի բոլոր Հոգևորականացդ զայս վաղեմի Հայրենաւանդ կարգաւորաց վայելուչ բարեկարգութիւնս եդեալ ծանուցաք, և Հոգևոր Ժողովով մերով հաստատին յայտնեցաք։ Ուստի սիրոմն Յիսուսի Քրիստոսի յորդորեմք զամենայն կարգաւորսդ ընդ մեզ նախանձաւոր սուրբ կրօնից գտանիլ, և անխափան զայս գեղեցիկ կանոնս նախնեաց մերոց ընդ այլ պարտուպատշաճ կանոնաց եդելոց ի վերայ կարգաւորացս պահել, և պահել տալ ջանասիրեսջիք յորդորանօք՝ խստիւ՝ և սպառնալեօք։

Որ և լսող և կատարողդ ըստ գրութեանս կացջիք ողջ և անփորձ փառաւորեալ ըստ Հոգւոյ և ըստ մարմնոյ ի պարծանս լրութեան Աղգիս և յօգուտ սրբոյ Եկեղեցւոյ մերոյ յաւիտեանս ամէն։

Գրեցաւ խորատական կոնդակս 1851 Հոկտեմբ. 15. ի Պատրիարքարանս ամենայն Հայոց։[1])

Ս. ՆԱՂԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Ցամի 1846 ի Նոյեմբերի 26.

Մեծապատիւ և գիտնական Եփրեմայ Ասպետ վարդապետի

Ս. Նաղարեանց խնդալ յարգանօք։

Զգրեալդ ի 30 թուականէ անցելոյ Հոկտ. ստացեալ մեր անկորուստ 50 արծաթով հանդերձ, սակաւուք պատասխանի ձեզ առնել ոչ դանդաղիմք, մանաւանդ զի և զայս իսկ ի ձէնջ աղաչիմք՝ առանց թողացուցանելոյ հարուստ ժամանակի ի մէջ անկանիլ։

Զքանակութիւն ընծայելոցն առ ի տեարց Լազարեանց որ ի տպագրութիւն համառօտ իմոյս աշխարհապատում մատենի անգիտացեալ մեր ապաքէն՝ զի ոչ ոք յայտարար այսորիկ մեզ գտաւ, և ոչ իսկ գուշակել մարթացեալ թէ քանի՞ ինչ ի հաւաքելոցն առ ձեզ յումմէ՝ առեալ եղև, յանել բաւիղ տարակուսանաց ցայսօր գտանէաք պարանեալ. և ոչ չափ ինչ. այլև ծագեցան մեզ այլուստեք անլուծանելի

[1]) Այս կոնդակը ստացել ենք մեծ. պ. Ա. Երիցեանից։ Ծ. Խ.